

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հին Առաքելական Եկեղեցիներից Հայոց Եկեղեցին մէկն է, և առաջիններից մէկը, որ պահպանել է որոշ աւանդութիւններ ու ծէսեր, ժողովրդական ընտրական ոգի Եկեղեցու վարչական կազմակերպութեան և կառավարութեան գործում: Դրանք Հայ Եկեղեցու առանձնայատկութիւններն են, նրան բնորոշ կողմերը քրիստոնէական ընդհանուր Եկեղեցիների մէջ, որ թանկ պիտի գնահատուի մեր կողմից: Օրինակ՝ Ծննդեան և Յայտնութեան տօնների միասին կատարումը, որ գալիս է ամենախորին հնութիւնից, որի Արևելքում տարածուած լինելու մասին վկայում է Եփրեմ Ասորին, պահել է միայն Հայոց Եկեղեցին: Այդպիսի առանձնահատուկ կողմերից մէկն է և ամենակարևորն ու նշանակալիցը Հայ Եկեղեցու նուիրապետութեան կազմակերպութեան և Եկեղեցու վարչական կառավարութեան ընտրական և ժողովրդական ոգին, որ նա իրագործել է քրիստոնէութեան առաջին դարերից և ըստ էութեան պահպանել մինչև այժմ:

Եկեղեցու գլուխը ընտրում է համայն հաւատացեալների հոգևոր և աշխարհիկ դասի ներկայացուցիչների ձեռքով, Առաջնորդութիւնների կամ թեմերի ղեկավարը ընտրում է տուեալ շրջանների աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչների կողմից և նուիրագործում Հայրապետի ձեռքով, իրաքանչիւր համայնքի հոգևոր հովիւը, երեսփոխը ընտրում է հաւատացեալների ծողովի կողմից:

Գուցէ առարկողներ կը լինին, թէ դրանք նոր ժամանակի երևոյթներ են այդ ձևով, առաջ ժողովուրդը, բազմութիւնը ձայն չունէր Եկեղեցու վարչական և նուիրապետական կազմակերպութեան և կառավարութեան մէջ, բայց այդ կը լինի սխալ առարկութիւն: Ամենայն մի պատմական երևոյթ պէտք է հասկանալ իր ժամանակի և հանգամանքների համաձայն: Հին հասկացողութեամբ ժողովրդի ներկայացուցիչներ էին իշխանները, հոգևորականները, առաջաւորները, նոյնիսկ հարուստ մեծատունները, իրենց բարեգործութեամբ և զոհաբերութեամբ երևելի հանդիսացած անձինք: Այսպէս դատելով, ամենայն իրաւամբ ասել կարող ենք, որ հնագոյն ոչ մի Եկեղեցու մէջ՝ կաթոլիկ կամ օրթոդոքս՝ այնպէս չէ պահպանուել ժողովրդական և ընտրական հոգին, ժողովրդի ներկայացուցիչների մասնակցութիւնը Եկեղեցու բախտի և կառավարութեան մէջ, ինչպէս Հայ Եկեղեցում: Բողոքական Եկեղեցիների մասին այստեղ խօսք լինել չի կարող, իբրև յետին ժամանակի երևոյթներ:

Ընդհանրական Եկեղեցին ծագել է, ընդարձակուել ու կազմակերպուել Հռովմէական կայսրութեան մէջ, որը շատ մեծ չափով ազդեցութիւն է ունե-

ցել եպիսկոպոսութիւնների, մետրոպոլիտութիւնների կամ արքեպիսկոպոսութիւնների, պատրիարքութիւնների և պապականութեան կազմակերպութեան վրայ: Յատկապէս Դիոկղետիանոսի շրջանի նոր կազմակերպութիւնը, նահանգների և աւելի մեծ ամբողջութիւնների կառավարութեան եղանակն ու փոխյարաբերութիւնները, պապականութիւնը միայն Հռովմում կարող էր երևան գալ, իսկ օրթոդոքս Եկեղեցու բիւրոկրատիկ և ցերեմոնիալով հարուստ պատրիարքութիւնը՝ Բիւզանդական պետութեան մէջ: Իսկ Հայոց Եկեղեցին, որչափ և կապուած Ընդհանրական Եկեղեցու և քրիստոնէական առաջին երեք դարերի աւանդութեանց հետ, ծագել է և զարգացել Կայսրութիւնից դուրս մի անկախ կամ կիսանկախ պետութեան և ժողովրդի մէջ, որի թագաւորի և նորան ենթակայ նախարարութիւնների փոխադարձ յարաբերութիւնները անպայման արտացոլուել են և սկզբնական նուիրապետութեան կազմակերպութեան վրայ: Այդ է պատճառը, որ մեր եպիսկոպոսութիւնները կրում են նախարարութիւնների անունները. նախարարական կազմակերպութեան անկումից յետոյ է միայն, որ նրանք որոշ երկրամասերի կամ քաղաքների անուններով են կոչւում: Այսպէս են՝ Եպիսկոպոս Տանն Բագրատունեաց, Եպիսկոպոս Տանն Արծրունեաց, Սիւնեաց և այլն: Ինչպէս որ նախարարութիւնները թագաւորին ստորադրուած են և որոշ պարտականութիւններով կապուած ըստ գահնամակի, այնպէս էլ եպիսկոպոսութիւնները դասաւորուած են և կապուած կաթողիկոսական Աթոռի հետ ըստ եկեղեցական գահնամակի կամ բարձերի:

Հայոց Եկեղեցու կազմակերպութեան բնորոշ առանձնայատկութիւնները կերպարանք և ձև են ստանում երկու մեծ հոսանքով. քրիստոնէական-ժողովական, ուրեմն և ընտրական-ժողովրդական ոգին՝ միացած նախարարական-ֆէոդալական փոխյարաբերութեանց ազդեցութիւնների հետևանքների հետ: Ֆէոդալական կարգերում ինքնըստինքեան թագաւորը միահեծան չէ, իսկ Հայոց Կաթողիկոսի իրաւասութեան և փոխյարաբերութեան վրայ իր դրոշմն է դնում քրիստոնէական-ժողովական ոգին և ուղղութիւնը: Այստեղից ահա հասկանալի են այն առանձնայատկութիւնները, որ Հայ Եկեղեցու կազմակերպութեան բնորոշ կողմերն են կազմում:

Եթէ այս համառօտ տեսութիւնից յետոյ անցնենք փաստերին, կը տեսնենք, որ դեռևս Դ դարում Ներսէս Մեծի ընտրութիւնը համապատասխան էր վերևի բացատրութեան, ինչպէս նկարագրում է Փաւստոս. «Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց ազգաց, տոհմաց, գնդից և դրօշուց տեարք, ամենայն սատրապք նախարարք և ազատք, պետք և իշխանք, զօրավարք և սահմանապահք ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեսցեն տեսցեն և խորհեսցին վասն իրեանց առաջնորդաց, թէ ում արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն և հովուել բանաւոր խաշանց Քրիստոսի (104—105): Շահապիւանի ժողովը, որի մասին համեմատաբար աւելի մանրամասնութիւններ գիտենք, մի ցայտուն օրինակ է ժողովական կազմութեան էութիւնը հասկանալու համար. «Եւ ժողովէին եպիսկոպոսք, երիցունք և սարկաւագունք բազումք և նախանձաւոր պաշտօնեայք և համօրէն ուխտ սրբոյ Եկեղեցւոյ, իշխանք և ամենայն գաւառապետք, գաւառակալք, պետք և բռնաւորք զօրագլուխք, հազարաւորք, կուսակալք, ազատօք կողմանց կողմանց, աւագ նախարարք աշխարհին հայոց» (Կանոնագիրք Հայոց Ղլտճեանի, եր, 99): Երկու ժողովների կազմութիւնը գրեթէ նման բառերով է նկարագրուած, որով և պաշտօնական աւանդութիւն է մատնանշում: Զ դարու մի շարք փաստաթղթեր ապացուցանում են եպիս-

կոպոսական, հոգևոր դասի, վանքերի ներկայացուցիչների հետ իշխանական դասի սերտ գործակցությունը ոչ միայն Հայրապետի ընտրությանն, այլև եկեղեցական մեծ վէճերի, դաւանաբանական խնդիրների լուծման մէջ մասնակից են նոյնիսկ «ժողովրդականք և շինականք»: Այսպէս են Բաբգէն Կաթողիկոսի, Ներսէս Բ-ի ժողովները, Աբրահամի ընտրության պարագաները, ուր ձեռնարկների կամ որոշումների տակ հաւասարապէս ստորագրում են եպիսկոպոսների հետ և իշխանները: Ժողովներին մասնակից են և գիտությանն ներկայացուցիչները, ի հարկ է հոգևորական դասից, Եկեղեցու անցեալին, կանոնական ու դաւանական խնդիրներին լաւատեղեակ մարդիկ, ինչպէս Մանազկերտի ժողովի մէջ Խոսրով հռետորն է:

Որպէս փաստացի լուսաբանություն, թող ներուի բառացի մէջ բերել Ներսէս Բ-ի օրով Միությանն ժողովին մասնակցողների անունները. «Ես Ներսէս Հայոց Կաթողիկոս, և Ներշապուհ Տարաւնոյ և Մամիկոնէից եպիսկոպոս, Գրիգոր սեպհական գնդին եպիսկոպոս, Պարգև Հարքայ եպիսկոպոս, Տիրակ Բագրևանդեայ եպիսկոպոս, Գրիգոր Բասենոյ եպիսկոպոս, Ներսէս Մարդաղոյ եպիսկոպոս, Վաղոտ Արշամունեաց եպիսկոպոս, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Գրիգոր Արծրունեաց եպիսկոպոս, Մարկոս Բագրևանդեայ եպիսկոպոս, Մաշտոց Խոռխոռունեաց եպիսկոպոս, Յոհան Ապահունեաց եպիսկոպոս, Արդիսոյ Ասորեաց ուղղափառաց եպիսկոպոս, Յովնան Վանանդայ եպիսկոպոս, Հաւուկ Արշարունեաց եպիսկոպոս, Քրիստափոր Պալունեաց եպիսկոպոս, Յոյս Գողթան եպիսկոպոս, Թադէոս Մեհենունեաց եպիսկոպոս, և ամենայն եպիսկոպոսունք Հայոց աշխարհին: Եւ իշխանք, Համազասպ ի Գուգվառամեան ի տանէ Մամիկոնէից, Գարջոյր Հայոց մաղխաղ, Սամէդ յԱրտաւազդան սպարապետ, Գրիգոր ի Հմայական, Սահակ ի Վարդանան, Աստուածատուր Վանանդայ տէր, Դատոյ ի Գարջուզեան, Գրիգոր և Վարդան ի Վասակայ, Զաւրակ ի Գղաւոնան, Վարազ Յոհան ի Յոհանան, Վարդան ի Մուշեղեան, Համազասպ, Սահակ ի Հմայակեան, Գնեալ Գնունի, Վարազ Գաբաղեան, Գրիգոր Աբեղեան, Ներշապուհ ի Շինական, Համազասպ Շինականեան, Աստուածատուր Հաւենունի, Աշոտ ի Վակտիրոցեան, Մուշեղ ի Հմայեկեան, Վրիւ յԱրտաշրան, Աստուածատուր Արշաւրեան, Սամուեղ ի Մամական, Վարդ ի Հմայական, Ներսէս ի Սամսոնեան, Վարդան Վահևունի, Հմայեակ Վարաժնունի, Մանուեղ Սպառնունի, Վարդ և Արտաւազդ ի Մամական, Համազասպ ի Սահական, Սահակ ի Մանուեղեան, Վարդան ի Մուշեղեան: Եւ ոչ ոք արտաքոյ մնաց յաշխարհականաց ի յայս ի կամաւոր գործոյ, ի քահանայից, ի վանականաց, ի ժողովրդականաց, ի բարետոհմից, և յամենայն շինականաց:

Էական է և շատ էական այն հանգամանքը, որ կաթողիկոսը միասնաբար չէ կանոնական թղթերը գրում, այլ իւր աթոռակիցների հետ միասին: Եթէ այս երեւոյթը թարգմանենք ներկայ լեզուով, այդ կը նշանակէ, թէ կաթողիկոսը իրեն Եկեղեցու միահեծան տէրը չի համարում, այլ նա գործում է, կառավարում է Հայրապետական Աթոռին կից խորհրդի հետ:

Կարելի է յետագայ դարերից էլ բազմաթիւ օրինակներ բերել ժողովրդի ներկայացուցիչների մասնակցության ժողովների և Եկեղեցու կառավարության մէջ: Բնականաբար ժամանակի ընթացքում փոխւում է այդպիսի տարրերի կազմությունը, բայց գաղափարն ըստ էության նոյնն է: Օրինակ՝ Լենկ Թեմուրից յետոյ Արևելեան Հայաստանում, իսկ Կիլիկիայում Ռուբինեանց անկումից յետոյ ժողովրդական ներկայացուցիչների կերպարանքը փոխւում է. իշխանական տոհմերի մնացորդներ, մեծատուն վաճառականներ, դիրք և

անուն ունեցող անձնաւորութիւններ, իշխող պետութեան հայ ազդեցիկ պաշտօնեաներ և այլն: Եւ այսպէս մինչև ԺԸ դարու վերջը և ԺԹ-ի սկիզբները, երբ Հայոց Կաթողիկոսական Աթոռը ընկնում է ռուսական տիրապետութեան տակ: Բայց Հայ Եկեղեցու ժողովրդական ոգին և ընտրական սկզբունքը տեսնում ենք իւր գլուխը բարձրացրած նաև ԺԹ դարում տաճկահայոց ազգային սահմանադրութեան ծագման և կազմակերպութեան ընթացքում կամ նոյնիսկ Ռուսահայաստանում Պոլոժէնիայի մէջ: Ռուսական տիրապետութեան հետ Հայ Եկեղեցու կառավարութեան սահմանադրութեան կամ Պոլոժէնիայի հաստատութիւնը դրական մի մեծ գործ էր այնպիսի մի ժամանակ, երբ Հայրապետական Աթոռի շուրջը ապաբախտ պայմանների բերմունքով, ներքին երկպառակութեան ու կուսակցական պայքարների հետևանքով կատարեալ շփոթութիւն ու կամայականութիւն էր իշխում: Պոլոժէնիայով Հայ Եկեղեցին ստանում էր որոշ և հաստատուն կանոնադրութիւն պետական օրէնքի ոյժ ստացած, ուր սահմանուած էին կաթողիկոսի, նրան կից սինոդի, առաջնորդների իրաւունքներն ու փոխյարաբերութիւնները: Թէև ի նկատի էր առնուած Եկեղեցու մէջ տիրող ընտրական ոգին, բայց ոչ լիապէս, այդ էլ միայն Կաթողիկոսի և քահանաների համար: Բնորոշ է, Հայ Եկեղեցու համար կանոնադրութիւն մշակողների մէջ, Եկեղեցին իւր իսկական ներկայացուցիչը չունէր: Պոլոժէնիայի բացասական կողմերն էին՝ Հայ Եկեղեցու աւանդութիւններին միանգամայն հակառակ կաթողիկոսական ընտրութեան մէջ երկու թեկնածուի սիստեմը, որոնցից մէկին հաստատում էր կայսրը, սինոդի անդամների և առաջնորդների ոչ ընտրական ձևը, այլ կաթողիկոսի առաջարկութեամբ, դարձեալ երկերկու թեկնածուներով, կայսեր մէկն ու մէկին հաստատութեամբ: Եւ ապա պրոկուրորի ներկայութիւնը սինոդում, որ շատ անգամ կամայական միջամտութիւն էր ունենում գործերի մէջ, երբեմն շատ ծանր հետևանքներով, ինչպէս կալուածքների գրաւումը, դպրոցների փակումն ու կաթողիկոսական իրաւունքների սահմանափակումը: Այս է պատճառը, որ մեր կաթողիկոսների մէջ չի հանդչում Պոլոժէնիան փոխել տալու ձգտումը, որ վառ էր պահում նաև արտասահմանեան հայութեան կողմից:

Պոլոժէնիան հնարաւորութիւն էր ստեղծել կաթողիկոսների համար երբեմն միապետական ձգտումներ ցուցադրելու, կամ նորա թոյլութեան և ծերութեան դէպքում շրջապատի կամայականութիւնը, անձնական հակումներն ու հաշիւները գերիշխող դարձնելու, կուսակցական ազդեցութիւնների թեր ու դէմ արտայայտութիւններին սուր պայքարի կերպարանք տալու ի վնաս ընդհանուր գործի յաջողութեան: Այս թերութիւնները վերացնելու փորձ կատարուեցաւ հանգուցեալ Իզմիրլեան Կաթողիկոսի ժամանակ, միաբանութեան, դիւանի, վանական պաշտօնների, ինչպէս և առաջնորդների և թեմական խորհուրդների համար ընտրական սկզբունք հաստատելու, բայց ցարական կառավարութիւնը արգելք հանդիսացաւ իրագործելու:

Ռուսական մեծ յեղափոխութիւնը բոլոր միւս օրէնքների հետ վերացնելով և Պոլոժէնիայի իրաւական նշանակութիւնը, հնարաւորութիւն ստեղծեց նորա փոխարէն զբաղուելու նոր սահմանադրութեամբ և առհասարակ եկեղեցական բարեկարգութեան խնդիրներով: Այդպիսի տրամադրութեան հետևանքն է ռուսահայ եկեղեցականների համագումարը Ս. Էջմիածնում 1917 թ., որ մի տեսակ նախապատրաստական աշխատանք պիտի կատարէր Ազգային Եկեղեցական կանոնադիր մեծ Ժողովի համար: Բայց հայ—տաճկական պատերազմները 1918—1920 թուականներին և դրանց հետևանքով սովի ու համաճարակ հիւանդութիւնների տարածումը արգելք հանդի-

սացան այդ խնդրով զբաղուելու, մինչև որ խորհրդային իրաւակարգի հաստատութեամբ հետզհետէ կարգ ու կանոն և խաղաղութիւն հաստատուեցաւ երկրում:

Խնդիրը ստիպողական բնոյթ ստացաւ Կաթողիկոսի մահամերձ հիւանդութեամբ, որի աղէտաբեր վերջաւորութիւնը բժիշկների կողմից շատ կարելի էր համարում, Եկեղեցին միանգամայն անկերպարան վիճակի մէջ թողնելով: Այս դէպքի հետ էր կապուած Գերագոյն Հոգևոր Խորհրդի ծագման ու կազմակերպութեան խնդիրը, որի համար յատուկ զեկուցում եղաւ:

Գերագոյն Հոգևոր Խորհրդի մտահոգութիւններից մէկն է եղել և Սահմանադրութեան նախագիծ կազմելը: Ժամանակը չի ներում ժողովի մանրամասն քննութեան ենթարկել այն յօդուածական ընթերցանութեամբ, դրա փոխարէն Գերագոյն Հոգևոր Խորհուրդը ժողովի ուշադրութեանն է մատուցանում այն գլխաւոր սկզբունքները, որ հիմք են ծառայել նրա կազմութեան:

Ա)—Վերականգնել ընտրական ժողովրդական ոգին Հայ Եկեղեցու լաւագոյն աւանդութիւնների և պատմական թելադրութիւնների համաձայն:

Բ)—Ըստ այսմ ընտրութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ հաւատացեալների աշխարհիկ դասի ու նուիրապետութեան ներկայացուցիչների սերտ գործակցութեամբ: Ընտրութիւն Գերագոյն Հոգևոր Խորհրդի՝ նուիրապետութեան և աշխարհիկ դասի անդամների մասնակցութեամբ: Ընտրութիւն Առաջնորդների և Թեմական Խորհուրդների՝ քահանայութեան և հաւատացեալների ներկայացուցիչներից:

Գ)—Սահմանադրութեան մշակում և հաստատութիւն վերև յիշուած ժողովրդական և ընտրական ոգով, որի մէջ ճշտուած ու պարզուած լինեն նաև Ընդհանրական Կաթողիկոսի և Կիլիկիոյ Տան Կաթողիկոսի, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքների յարաբերութիւնները:

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 10 ՄԱՅԻՍ 1932-ԻՆ